ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

2 փետրվարի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

15
(2681)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ՈՎ ՊԵՏՔ Է ՄԵՂԱԴՐՎԻ «ՀԱՑ ԲԵՐՈՂԻ» ՄԱՀՎԱՆ ՀԱՄԱՐ





ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Չարչյանի՝պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու վերաբերյալ միջնորդության հիմքում ներկայացրել է ՊՊԾ գնդի գրավման ժամանակ «Սասնա ծռերին» հաց հասցրած, հանրությանը հայտնի դարձած Հաց բերողի՝ Արթուր Սարգսյանի մահվան գործը, որը քննվում է 2017թ.-ից ի վեր: Ուշագրավն այն է, որ գլխավոր դատախազը «Հաց բերողին» կալանքի տակ պահելու հարցում առանձնացրել է միայն Չարչյանին, մինչդեռ բազմիցս բարձրացվեց «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի պետ, ներկայումս նույն ՊՈԱԿ-ի տնօրեն Արգամ Հովսեփյանի անունը:

Ըստ հրապարակումների՝ Հովսեփյանը պատասխանատու էր հիվանդության՝կալանքի հետ համատեղելի կամ անհամատեղելի լինելու հարցը պարզելու համար: Հիշեցնենք՝դեռ 2019-ի մայիսի 14-ին ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը հրապարակավ ԱԺ ամբիոնից հայտարարել էր. ««ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում երբ իրականացվեց 2-րդ փորձաքննությունը, եւ ասվեց, որ կալանքի հետ անհամատեղելի հիվանդություն չունի «Հաց բերողը», կարճ ժամանակ անց եզրակացություն տվող բաժնի պետը նշանակվեց ՊՈԱԿ-ի տնօրեն»:

Հիմա, պարզվում է, փորձագետները սխալվել են, մեղավորն էլ ԱԺ պատգամավոր Չարչյանն է:

Արդա՞ր է արդյոք, որ այսօր իրավապահների տեսադաշտում հայտնվել է միայն ընդդիմադիր պատգամավոր Արմեն Չարչյանը, իսկ Արգամ Հովսեփյանի մասով որեւէ գործընթաց չկա: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արգամ Հովսեփյանը արդարացավ. «Ընդհանրապես, փորձաքննությունները իրականացվում են քրեական վարույթի շրջանակներում՝Քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան: Այդ պահանջներին համապատասխան կատարվել է փորձաքննություն: Ես փորձագետ հանդես չեմ եկել այդ փորձագիտական հանձնաժողովի կազմում, այդ փորձաքննության կատարումը ինձ՝ որպես փորձագետի հանձնարարված չի եղել 2017 թվականին»:

Մեր դիտարկմանը, թե ինչպես ստացվեց, որ այդ փորձաքննությունից հետո հետագայում նույն կառույցի ղեկավար նշանակվեց, վերջինս նշեց. «Ես 2017-ին այդ կառույցի ղեկավար չեմ եղել»:

Ամեն դեպքում, Արգամ Հովսեփյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պնդեց. «Կրկնում եմ՝ տվյալ փորձաքննությունը կատարվել է օրենսդրական բոլոր նորմերի տառի եւ ստորակետի պահպանմամբ: Իրավական գործընթացներ են գնում ու պետք է գնան, որպեսզի պարզ լինի՝որը որից հետո է»:

Ի՞նչ է ստացվում. ՊՈԱԿ-ի տնօրենը պնդում է, որ փորձաքննությունը օրենքի տառին համապատասխան է իրականացվել, սակայն Արմեն Չարչյանին մեղադրում են՝նույն եզրակացության հիմքով: Այս դեպքում կա՛մ պետք է Չարչյանը արդարացվի, կա՛մ պետք է նրա հետ մեղադրյալի աթոռին հայտնվի նաեւ Արգամ Հովսեփյանը:



«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել, թե այս օրերին ինչ իրավիճակ է դատավոր Սեդա Սաֆարյանի շուրջ Սահմանադրական դատարանում: Հունվարի 19-ին փաստաբան Արսեն Բաբայանի կողմից տեղեկություն հրապարակվեց այն մասին, որ 2022թ. դեկտեմբերի 28-ին Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանը՝որպես դիմողների ներկայացուցիչ, այսինքն՝որպես փաստաբան, հատուկ վերանայման վերաքննիչ բողոք է մուտք արել Վերաքննիչ քրեական դատարան: Սեդա Սաֆարյանը, սակայն, չէր կարող հանդես գալ որպես փաստաբան, քանի որ նա դատավոր է. դա արգելված է օրենքով: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝Սեդա Սաֆարյանը ՍԴ դատավորների մոտ անկեղծացել է իր կատարած գործողությունների մասով եւ ինքնախոստովանություն արել, որ, որպես փաստաբան, թող դատավորները որոշեն իր ճակատագիրը: Այս օրերին ՍԴ դատավորները փակվել են իրենց սենյակներում, եւ միգուցե մի օբյեկտիվ դատավոր գտնվի, որ Սեդա Սաֆարյանի մասով դիմում ներկայացնի ՍԴ նախագահին, որպեսզի կարգապահական վարույթ հարուցվի, եւ քննվի նրա վարքը: Սա միակ տարբերակը չէ. մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ՍԴ դատավորները ներքին խոսակցություն են ունեցել, որ Ազգային ժողովը եւս կարող էր մամուլում տեղ գտած տեղեկության մասով դիմում ներկայացնել ՍԴ եւ պարզաբանում պահանջել՝ եղել է արդյոք նման բան, թե ոչ: Նկատենք՝նման բան ԱԺ-ն կարող է անել 3/5-րդով, այսինքն՝64 ձայնով, ինչը ընդդիմությունը չունի, ՔՊ-ն էլ դժվար իր սիրելի դատավորի օրինախախտմանը ադեկվատ արձագանք տա:





Կառավարությանը ենթակա Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը 2022 թվականի նոյեմբերի 10-ից ղեկավար չունի: Այդ օրը Նիկոլ Փաշինյանը որոշում էր ստորագրել եւ նախկին ղեկավար Հակոբ Ավագյանին ազատել այդ պաշտոնից: Մենք գրել էինք, որ կառավարությունը նրան պաշտոնանկ անելու ներքին որոշում ուներ, սակայն միջոց չէր գտնում: Ավելի քան ութ ամիս սպասելուց հետո ի վերջո այդպիսի որոշում կայացվեց: Եվ, ահա, Նիկոլ Փաշինյանի որոշումից երկուսուկես ամիս անց անգամ Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը ղեկավար չունի: Ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարում է նախկին ղեկավարի տեղակալը՝Սլավիկ Սարգսյանը: Ընդ որում՝ վերջինս մարտի 31-ին էր նշանակվել կառույցի փոխտնօրեն, եւ նրան վստահված էր հենց Ավագյանին հսկելու գործառույթը: Տեսչական մարմնում այնքան էլ ոգեւորված չեն այդ հանգամանքով, եւ խոսվում է, որ Սլավիկ Սարգսյանն առանձնապես փորձ չունի, անտեղյակ է տեսչական մարմնի գործառույթներից: Չնայած այդ հանգամանքին՝կառավարությանն ի վերջո հաջողվեց հեռացնել Հակոբ Ավագյանին աշխատանքից եւ ղեկավարի պարտականությունների ժամանակավոր կատարումը վստահել Սարգսյանին, որը թերեւս լավ է կատարել ներսում ղեկավար կազմին հսկելու իր գործառույթը եւ «պարգեւատրվել» դրա համար: Միայն ղեկավարի պաշտոնը չէ, որ թափուր է այդ կառույցում: Ըստ տեսչական մարմնի հաստիքացուցակի՝ղեկավարը պետք է ունենա երեք տեղակալ, սակայն այս պահին երկու հաստիքն է զբաղեցված, համենայնդեպս, այդ մասին են վկայում կառույցի պաշտոնական կայքում տեղ գտած տվյալները:



Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշն ավելացել է: Պաշտոնական տվյալներով՝ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա ընթացքում 14.2 տոկոսով աճել է՝2021 թվականի հետ համեմատ: Արձանագրենք նաեւ, որ մեկ տարվա ընթացքում առեւտրաշրջանառության ծավալներն են ավելացել 17 տոկոսով: Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը դեռ չի հասցրել «հպարտանալ» ՏԱՑ ցուցանիշներով: Ծանոթանալով այս թվերին՝հարց է առաջանում՝ արդյոք մենք ապրում ենք երջանիկ, բայց տեղյակ չենք: Գուցե Վիճակագրական կոմիտեն թվանկարչությա՛մբ է զբաղվել: Տնտեսագետ Ատոմ Մարգարյանից հետաքրքրվեցինք՝ արդյոք համապատասխանում են հրապարակված ցուցանիշները մեր իրականությանը. «Համապատասխանում է, բայց պետք է ճշտել, թե որ իրականությանը: Տեսեք, թե այդ ակտիվություններն ինչի հետեւանք են՝ռուս-ուկրաինական պատերազմի եւ դրանով պայմանավորված 300.000 ռելոկանտների ու նրանց փողերի ու գրանցած աշխատատեղերի ու ներդրումների, երկրորդը՝սարսափելի մեծ, առասպելական 5 տրիլիոն 300 մլրդ դոլարի խաղադրույքների, օֆշորային, հիմնականում՝ կասկածելի ծագումնաբանությամբ փողերի ներհոսքի, եւ դա եւս պետք է ստուգաբանվի, պարզաբանվի: Եթե Վիճակագրական կոմիտեն իսկապես ազգային է, ապա պետք է այդ ամբողջը բացված ներկայացնի՝կոնկրետ որ կզղիների որ բանկերի որ հաշիվներից են հորդում Հայաստան այդ տրիլիոնները: Եւ, այո, կարող է դառնալ 144 տոկոս էլ, բայց, ինչ, դա վիրտուալ, ըստ էության որեւիցե բան չտվող ակտիվություն է, ընդ որում՝ ոչ ՀՀ ռեզիդենտների. դա հիմնականում ոչ ռեզիդենտների ստեղծած, այսպես ասած, ալիքն է, որը ինչպես բարձրանում է, այնպես էլ կարող է շատ արագ իջնել»: Տնտեսագետի խոսքով՝աղքատությունը գրեթե 80 տոկոսով աճել է, իսկ բնակչության գերակշիռ մասը կյանքի որակի հետ կապված խնդիրներ ունի:

ԱՐՑԱԽ

# ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՀԱԱԳԱՅԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆԸ

**Հաագայի դատարանը Ադրբեջանի դեմ գործով առաջիկա շաբաթների ընթացքում որոշում կկայացնի: Հայաստանը ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանից պահանջում է հրատապ միջոց կիրառել եւ պարտավորեցնել Ադրբեջանին բացել Լաչինի միջանցքը, որը 40-օրից ավելի է՝ փակ է, ինչպես նաեւ ապահովել մարդկանց, տրանսպորտի ազատ երկկողմ տեղաշարժը եւ անհապաղ վերականգնել էներգիայի ամբողջական մատակարարումը: Ավելի վաղ՝ հունվարի 30-ին, Հաագայի դատարանը նաեւ Լաչինի հարցով լսումներ էր անցկացրել:**



«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել է Արցախի Ազգային ժողովի «Արդարություն» խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանի հետ՝պարզելու՝թե ինչ սպասումներ ունեն արցախցիները միջազգային հարթակներում անցկացվող այս քննարկումներից եւ Հաագայի դատարանի որոշումից:

**-Պարո՛ն Գալստյան, ի՞նչ ակնկալիքներ կան՝Հաագայի դատարանի որոշման հետ կապված, կնպաստի՞ այն Լաչինի միջանցքի ապաշրջափակմանը:**

-Արցախում սպասում են Հաագայի դատարանի որոշմանը. հույս ունենք, որ այն դրական արդյունք կտա: Հուսանք, որ գոնե այս անգամ գործնական քայլեր կձեռնարկվեն, որոնք տեսանելի կլինեն նաեւ մեզ համար եւ կստիպեն Ադրբեջանին բացել միջանցքը: Միանշանակ, մենք համաձայն ենք, որ միջազգային հանրության քայլերը հայտարարություններից այն կողմ չեն անցել, բայց հաշվի առնելով, որ այս անգամ դատական գործընթաց է, կարող է նաեւ գործնական քայլեր լինեն, որոնք կպարտադրեն Ադրբեջանին բացել միջանցքը: Ադրբեջանը երկու տարուց ավելի է՝ փորձում է միջազգային հանրությանը ցույց տալ, թե Արցախի հարցը լուծված է, բայց այսօր տեղի ունեցող գործընթացները փաստում են, որ Արցախի խնդիրը դեռ կա. բոլորը հասկանում են, որ ԼՂ խնդիրը լուծված չէ: Միջազգային հանրությունը խոսում է ԼՂ հիմնախնդրից. սա փաստ է, որի հետ Ադրբեջանը պետք է հաշվի նստի: Համայն աշխարհը իմացավ, որ Արցախի հիմնախնդիրն առկա է եւ լուծումներ է պահանջում, այս առումով Հաագայի դատարանում իրականացված քննարկումը կարելի է նաեւ հաջողություն համարել:

**-Ադրբեջանը հրաժարվում է բանակցություններից ո՛չ միայն հայկական կողմի, այլ նաեւ Ռուսաստանի հետ: Ի՞նչը կստիպի Ադրբեջանին նորից բանակցությունների դաշտ գալ:**

-Եթե միջազգային հարթակներում Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառվեն, դրանք կարող են Ադրբեջանին զսպել եւ ստիպել, որ բացի Լաչինը: Մենք համոզված ենք, որ այսօր ռուս խաղաղապահների դերն ու նշանակությունը շատ մեծ է, արցախահայությունը գնահատում է դա, խաղաղապահները շատ խնդիրներ են կարողանում լուծել, բայց Ադրբեջանը չի ուզում ոչ մի բանակցությունների մասնակցել. ինքը ԼՂ հարցը փակ է համարում: Ցավոք, նման կերպ են մտածում նաեւ Հայաստանի իշխանությունները, եւ երեւի թե ինչ-որ առումով նաեւ սա է խոչընդոտ հանդիսանում, որպեսզի միջազգային հանրությունը գործնական քայլեր ձեռնարկի: Նշենք, որ Արցախը Հայաստանին ու արտաքին աշխարհին կապող միակ հանգույցը՝Լաչինի միջանցքը, փակ է դեկտեմբերի 12-ից: Քաղաքացիական հագուստներով մի խումբ ադրբեջանցիներ բնապահպանական կեղծ պատճառաբանությամբ փակել են ճանապարհը:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԴԻՄՈՒՄ՝ ՊՎԾ

# ԽԱԽՏՈՒՄՆԵՐ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

**ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Երեւանի քաղաքապետարանի կողմից պետական գնումների ընթացակարգի խախտումներ, պետական բյուջեի հնարավոր վատնման լրջագույն մտահոգություններ են հնչել Երեւանի ավագանու անդամի կողմից, ինչի առիթով դիմել եմ Պետական վերահսկողական ծառայության ղեկավարին: Երեւան քաղաքի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյանը հրապարակել է տեղեկություն (https://bit.ly/3HobnfI , https://bit.ly/3wHWssc )՝ Երեւանի քաղաքապետարանի կողմից պետական գնումների ընթացակարգի խախտման մասին: Բարձրաձայնվել է գնման գործընթացի, այդ թվում նաեւ շինաշխատանքների մրցույթներում եղած աղաղակող խախտումների մասին:**



Երևանի քաղաքապետարանի կողմից պետական գնումների ընթացակարգի խախտումներ, պետական բյուջեի հնարավոր վատնման լրջագույն մտահոգություններ. դիմել եմ Պետական վերահսկողական ծառայության ղեկավարին

Երեւանի քաղաքապետարանի կողմից պետական գնումների ընթացակարգի խախտումների վերաբերյալ բարձրաձայնումները լուրջ մտահոգություն են առաջացնում ՀՀ պետական եւ մայրաքաղաքային բյուջեի հնարավոր վատնման վերաբերյալ: Ընդունելով պետական իրավասու օղակների կողմից պարզաբանումների ներկայացման վերաբերյալ քաղաքացիների հանրային պահանջները, ինչպես նաեւ ընդգծելով իրեն Ժողովրդավարական հռչակած Հայաստանի Հանրապետությունում պետական գնումների թափանցիկության եւ հասանելիության, ՀՀ օրենսդրության պահանջներին գնումների ընթացակարգի համապատասխանության անհրաժեշտությունը՝ Պետական վերահսկողական ծառայության ղեկավարից ակնկալում եմ մանրամասն տեղեկություն, թե արդյոք Պետական վերահսկողական ծառայությունը իրականացրել է քայլեր՝ վերոնշյալ հրապարակումների կապակցությամբ, եւ ինչ արդյունքներ կան:

Հուսամ՝ ՊՎԾ ղեկավարը բազմակողմանիորեն կուսումնասիրի ավագանու անդամի բարձրաձայնումները եւ իրապես օբյեկտիվ գնահատական կտա: Երեւանի փոխքաղաքապետ, Երեւանի ավագանու ընտրությունների դե ֆակտո ընտրարշավը սկսած Տիգրան Ավինյանը հատկապես պետք է բացատրի, թե թափանցիկ աշխատանքի, կոռուպցիան բացառելու եւ այլ վերամբարձ խոստումներով իշխանության եկած քաղաքական միավորն ինչու է դրժում խոստումները:

Դե իսկ Նիկոլ Փաշինյանը պարտավոր է արձագանքել այս բարձրաձայնումներին՝քաղաքական եւ իրավական պատասխանատվության անխուսափելի վճռականությամբ: Հակառակ դեպքում կնշանակի, որ ինքն է կոռուպցիայի թիվ մեկ հովանավորը մեր երկրում»:

## ՆՄՈՒՇԱՌՈՒՄ ԵՆ ԱՐԵԼ

Հայաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբերը 2022 թվականի դեկտեմբերին հանդիպել են Արարատի մարզում՝ հայ-թուրքական սահմանի մոտ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իրականացվել է նաեւ Մարգարայի կամուրջի նմուշառում: Տեղեկացանք նաեւ, որ աշխատանքային խմբի անդամները դեկտեմբերին երկու հանդիպում են ունեցել ավելի վաղ ձեռք բերված պայմանավորվածություններն իրականացնելու համար: Խոսքը, մասնավորապես, 2022 թվականի հուլիսի 1-ին Թուրքիայի ներկայացուցիչ Սերդար Քըլըչի եւ Հայաստանի ներկայացուցիչ Ռուբեն Ռուբինյանի հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունների մասին է: Այդ հանդիպման ժամանակ որոշվել էր հնարավոր ամենասեղմ ժամկետներում Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանը հատելու հնարավորություն ապահովել Հայաստան եւ Թուրքիա այցելող երրորդ երկրների քաղաքացիների համար: Պայմանավորվել են նաեւ հնարավոր ամենասեղմ ժամկետներում մեկնարկել Հայաստան-Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումների իրականացումը: Ինչպես գրել էր «Ժողովուրդ» օրաթերթը, չնայած հունվարի 1-ից այդ արգելքը վերացվել է, սակայն, ինչպես հայտնել էին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից, դեռ գործընթացը չի մեկնարկել: «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցում էր ուղարկել ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝խնդրելով հայտնել, թե ինչ աշխատանքներ են իրականացվել դեկտեմբեր ամսին, եւ ինչ փուլում է գտնվում հայ-թուրքական սահմանի բացման գործընթացը: Ի պատասխան մեր հարցմանը՝ՀՀ ԱԳՆ լրատվության եւ դիվանագիտության վարչությունից պատասխանել են. «ՀՀ-ի եւ Թուրքիայի միջեւ աշխատանքային խմբերի մակարդակով տեղի է ունենում հուլիսի 1-ի հանդիպումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների կյանքի կոչման գործընթաց: Այդ համատեքստում իրականացվել է նաեւ Մարգարայի կամրջի նմուշառում»:

## ՈՐՈՇԵԼ ԵՆ ՆԵՂԸ ԳՑԵԼ

Հաջորդ շաբաթ մեկնարկելիք ԱԺ նստաշրջանը թերեւս ամենաթեժերից է լինելու: Արդեն հայտնել ենք, որ փետրվարի 7-ին ԱԺ-ն քննարկելու է «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Սեյրան Օհանյանին եւ Արմեն Չարչյանին անձեռնմխելիությունից զրկելու հարցը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝իշխանությունն ու ընդդիմությունն արդեն տեւական ժամանակ է՝ ամենայն մանրամասնությամբ պատրաստվում են այդ օրվան, պարտականությունների բաշխում են անում, ելույթներ են քննարկում, այլ կերպ ասած՝ որոշել են սուր հակագրոհներ իրականացնել այդ օրը: Մեզ հայտնի դարձավ, որ ՔՊ-ականները, չնայած որոշ տարաձայնություններին, որոշել են համաձայնություն տալ ընդդիմադիր պատգամավորներին անձեռնմխելիությունից զրկելուն, որպեսզի չստացվի՝դեմ են գնում դատախազությանը: Նիկոլ Փաշինյանը ՔՊ-ականներին հրահանգել է ակտիվ լինել, համոզիչ փաստերով հիմնավորել՝ինչու են այդպես վարվում, ու ինչու են հենց հիմա որոշել ընդդիմադիրների նկատմամբ նման գործընթաց սկսել. իշխանականները օրակարգ են հանելու ընդդիմադիրների հետ կապված ողջ «արխիվը», սուր հայտարարություններով քննադատելու են ընդդիմադիրներին: Մեր տեղեկություններով՝ ընդդիմադիրներն էլ իրենց հերթին «հակագրոհի» են պատրաստվում: Նրանք թեեւ սկզբում որոշել էին չմասնակցել նիստին, բայց հետո մտափոխվել են, որոշել են մասնակցել ու «նեղը գցել» ոչ միայն ՔՊ-ականներին, այլ նաեւ գլխավոր դատախազին, որը խորհրդարանում զեկուցելու եւ պահանջելու է քրեական վարույթ սկսելուն համաձայնություն տալ:

## ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ԴՌՆՓԱԿ ՆԻՍՏԻՑ

ArmLur.am-ն արդեն հայտնել է, որ ՔՊ-ն երեկ վարչության նիստ է արել՝ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ:

ArmLur.am-ին նոր մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ դռնփակ նիստից:

ArmLur.am-ի բացառիկ տեղեկություններով՝ նիստը թեեւ բավականին բուռն է անցել, բայց առանձին միջադեպեր չեն եղել: Նիկոլ Փաշինյանն ու ՔՊ-ականները հիմնականում քննարկել են հաջորդ շաբաթ մեկնարկելիք ԱԺ նստաշրջանի հետ կապված մի շարք հարցեր, ինչպես նաեւ խմբակցության ռազմավարության հետ կապված հարցեր:

Փաշինյանը ՔՊ-ականներին հորդորել է ընդդիմադիր պատգամավորներին անձեռնմխելիությունից զրկելու հարցով ԱԺ նիստի ժամանակ զգուշավոր լինել, շատ կոշտ հայտարարություններ չանել եւ ավելի չսրել առանց այն էլ լարված իրավիճակը:

Տեղեկացանք նաեւ, որ երեկվա նիստին ընդդիմադիրների մասով վերջնական որոշում չի եղել, կարծիքներ են փոխանակել ՔՊ-ականները. վերջնական որոշում լինելու է փետրվարի 6-ի՝ խմբակցության նիստի ժամանակ:

Ինչ վերաբերվում է ՄԻՊ թեկնածուի առաջադրմանը, ապա այդ հարցով երեկ քննարկում չի եղել:

## ՀԱԿԸՆԴԴԵՄ ԵԼՈՒՅԹՆԵՐ

Բաքուն երեկ Արդարադատության միջազգային դատարանից պահանջել է պարտավորեցնել Հայաստանին դադարեցնել ադրբեջանական տարածքների ականապատումը: Ադրբեջանի ներկայացուցիչ Էլնուր Մամեդովն էր, որը ՄԱԿ-ի դատարանում ունեցած իր ելույթում պահանջեց հրատապ միջոց կիրառել Հայաստանի դեմ՝ պնդելով, թե նոր փաստեր ունի:

Նրան, սակայն, հակադարձել է Հայաստանի ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը՝ ընդգծելով, որ սա Ադրբեջանի հերթական փորձն է ուշադրությունը շեղել իր չարագործություններից:

Հայաստանի ներկայացուցիչն ընդգծեց՝ թեեւ Բաքուն խոսում է ամիսներ առաջ տեղի ունեցած երեւույթների մասին, այդուհանդերձ այս միջնորդությունն Ադրբեջանը ներկայացրել է Հայաստանի դիմումից ընդամենը 6 օր անց:

Հաագայի դատարանում դատավորները լսել են նաեւ հայկական կողմի բողոքը՝ ընդդեմ Ադրբեջանի: Հայաստանը միջազգային դատարանից պահանջում է հրատապ միջոց կիրառել եւ պարտավորեցնել Ադրբեջանին բացել Լաչինի միջանցքը, ապահովել մարդկանց, տրանսպորտի ազատ, երկկողմ տեղաշարժը, ինչպես նաեւ անհապաղ վերականգնել էներգիայի մատակարարումը:

Հարցի հրատապությունը հաշվի առնելով՝ հայկական կողմը խնդրել է հնարավորինս արագ արձագանքել իր դիմումին: Դատարանը լսումների ավարտին հայտնեց, որ հնարավորինս արագ կտեղեկացնի որոշումների հրապարակման ժամկետների մասին:

ԱՎԵԼԱՑՐԵԼ Է

# ԼՐԱՎՃԱՐ՝ ՊՊԾ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ

**Կառավարությունն իր վերջին նիստի ժամանակ հերթական անգամ չզեկուցվող հարցերի թվում ավելացրել է ուժային կառույցներում աշխատող եւ պաշտոնյաների անվտանգությունն ապահովող ծառայողների համար ֆինանսական հատկացումների չափը: Կառավարության վերջին նիստի ժամանակ ընդունված որոշումը վերաբերում է Պետական պահպանության ծառայության զինվորական ծառայողներին. նրանց համար կսահմանվի լրավճար, ինչը մինչեւ հիմա չէր եղել:**



Նշենք, որ այս փոփոխությունը կառաջացնի շուրջ 8.6 մլն դրամ գումարի չպլանավորված լրացուցիչ ծախս բյուջեից: Ուշագրավ է, որ Արմեն Աբազյանի ղեկավարած կառույցում առաջարկել են ՊՊԾ-ի զինվորական ծառայողների համար նախատեսել լրավճար, սակայն չեն ներկայացրել դրա համար անհրաժեշտ հիմնավորումները:

ՊՊԾ զինվորական ծառայողների համար լրավճարներ սահմանելու նախագծի վերաբերյալ առարկություն է ներկայացրել Ֆինանսների նախարարությունը, ըստ որի՝ նախագծին կից հիմնավորման մեջ բացակայում են լրավճարներ սահմանելու նախաձեռնությամբ հանդես գալու համար հիմք դարձած վերլուծությունները եւ հիմնավորումները:

Ներկայացված չի եղել նաեւ դա ընդունելու անհրաժեշտությունը հիմնավորող որեւէ փաստարկ, ինչի արդյունքում հնարավոր չէ լիարժեք գնահատել նախագծով առաջարկվող կարգավորումների անհրաժեշտությունը եւ նպատակադրումը:

Չնայած Ֆինանսների նախարարության առարկությանը՝ նախագիծն ընդունվել է, եւ բյուջեն 8.6 միլիոն դրամով ծանրաբեռնվել է պաշտոնյաների անվտանգությամբ զբաղվող ՊՊԾ ծառայողների համար:

Հիշեցնենք, որ անցյալ տարի՝նոյեմբերի 24-ին, կառավարության նիստի օրակարգում ընդգրկված որպես կանոն չզեկուցվող հարցերից մեկով ընդունվեց Պետական պահպանության ծառայությունը Ազգային անվտանգության ծառայությունից առանձնացնելու եւ Նիկոլ Փաշինյանի ենթակայության տակ որպես առանձին մարմին դարձնելու նախագիծը:

Ազգային ժողովում նախագիծը ներկայացնելիս անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը ՊՊԾ-ն ուղիղ Փաշինյանի ենթակայության տակ դնելու անհրաժեշտությունը պատճառաբանեց, թե անվտանգության ապահովման կարողությունները բարձրացնելու նպատակով է արվում, եւ հատուկ ուշադրություն է դարձվում անվտանգության մարմինների աշխատակիցների աշխատավարձերը մինչեւ 100 տոկոս բարձրացնելու վրա:

Կառավարությունը նոյեմբերի 24-ի նիստի չզեկուցվող հարցով էր Պետական պահպանության ծառայությունն առանձնացրել Ազգային անվտանգության ծառայությունից. այն դարձավ Նիկոլ Փաշինյանի ենթակայության տակ գտնվող մարմին:

Այս մասին նույնպես Կառավարության նիստի ընթացքում հայտարարել էր Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը՝ նշելով. «Մի կարեւոր փոփոխություն էլ ենք անում. նախկինում նախագահին տրվում էր ցմահ պետական պահպանության ծառայություն, այժմ այդ ծառայությունը կտրամադրվի պաշտոնաթող լինելուց հետո եւս 7 տարի, իսկ վարչապետի դեպքում՝ 10 տարի»:

«Սրանով Ազգային անվտանգության ծառայությանն իր բուն գործառույթների վրա կենտրոնանալու հնարավորություն է տրվում, որովհետեւ պետք է ԱԱԾ-ն զբաղվի երեք հիմնական ուղղություններով՝ հետախուզություն, հակահետախուզություն եւ ահաբեկչության դեմ պայքար»,- ասաց Փաշինյանը:

Միաժամանակ առաջարկվում է լրամշակել ԱԺ նախագահին տրամադրվող պետական պահպանության դրույթն այնպես, որ պաշտոնավարման ժամանակահատվածում պետական պահպանություն տրամադրվի նաեւ նրա հետ համատեղ բնակվող, ինչպես նաեւ նրան ուղեկցող ընտանիքի անդամներին:

Այս դրույթը գործելու է՝օրենքն ընդունելու պահից սկսած:

Նախագծով ծառայության պետի եւ վերջինիս տեղակալի համար նախատեսվել են ոչ զինվորական՝ վարչական պաշտոններ: Ծառայությունում նախատեսվում են ծառայության պետի տեղակալի՝ ինչպես զինվորական ծառայության պաշտոններ, այնպես էլ ոչ զինվորական ծառայության պաշտոններ: Պարզեցվել են վերջիններիս պաշտոնի նշանակման ներկայացվող պահանջները, որի արդյունքում վերոնշյալ պաշտոնները կարող են համալրվել նաեւ քաղաքացիական անձանց կողմից:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԲԵԼԳԻԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է

Բելգիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը բանաձեւ է ընդունել՝ Ադրբեջանին հորդորելով անմիջապես բացել Լաչինի միջանցքը:

«Բելգիայի դաշնային խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը միաձայն ընդունել է բանաձեւ, որը դատապարտում է Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի (Արցախի) շրջափակման համար եւ Ադրբեջանի իշխանություններին կոչ է անում անմիջապես բացել Լաչինի միջանցքը», - նշված է գրառման մեջ:

## ԱՆԱԿՆԿԱԼ ԱՅՑԵՐ

Մեկնարկել են պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի շրջայցերը ՊՆ բոլոր զորամիավորումներ ու զորամասեր: Դրանք լինելու են շարունակական եւ կրելու են նաեւ անակնկալ բնույթ: Հանկարծակի այցերի նպատակն է տեղում ծանոթանալ ծառայության կազմակերպման ընթացքին, զինծառայողների կարգապահության եւ բարոյահոգեբանական վիճակին, սոցիալ-կենցաղային պայմաններին, առաջնագծի կահավորմանն ու իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին:

Այցերի ընթացքում պաշտպանության նախարարը նաեւ անմիջական զրույցներ կունենա զինվորների հետ՝ լսելով նրանց մտահոգություններն ու խնդիրները:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Իրավունքի եւ արդարության կենտրոն «Թաթոյան»» հիմնադրամի տնօրեն Արման Թաթոյանը երեկ հանդիպել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ, International Committee of the Red Cross) հայաստանյան պատվիրակության ղեկավար Թիերի Ռիբոյի հետ:

Հանդիպմանը քննարկվել են «Իրավունքի եւ արդարության կենտրոն «Թաթոյան»» հիմնադրամի աշխատանքի առաջնահերթություններով պայմանավորված հումանիտար, այդ թվում՝ սահմանային բնակիչների իրավունքների խախտումներին առնչվող խնդիրներ: Անդրադարձել են նաեւ համագործակցության հարցերի:

## ՆՈՐ ԲԱՆԱՁԵՎ

Եվրոպական խորհրդարանն ընդունել է «Մշակույթի համար նոր եվրոպական օրակարգի եւ միջազգային մշակութային հարաբերությունների համար ԵՄ նոր ռազմավարության իրականացում» բանաձեւը:

Բանաձեւում անդրադարձ է կատարվում հակամարտային գոտիներում մշակութային արժեքների պաշտպանության հարցերին, եւ դատապարտվում է վերջին հակամարտությունների ժամանակ պատմական, գեղարվեստական եւ մշակութային ժառանգության նպատակաուղղված ոչնչացումը:

Եվրոպական խորհրդարանի անվտանգային ու պաշտպանական հարցերով ենթակոմիտեի նախագահ Նատալի Լուազոյի (Nathalie LOISEAU/Renew Europe/Ֆրանսիա) ստորագրած եւ նույն խմբակցության անդամ Պետրաս Աուստրեւիչուսի (Petras AUŠTREVICIUS/Լիտվա) կողմից համաստորագրված լրամշակման հիման վրա՝ հստակ քննադատվում է նաեւ Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային արժեքների ոչնչացմանն ուղղված Ադրբեջանի շարունակական քաղաքականությունը:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

# ԳՈՐԾԸՆԹԱՑ՝ ՍՊԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

**Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 2023 թվականի փետրվարի 1-ին որոշում է կայացվել ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներական ծառայության պետ, կապիտան Ե.Հ.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մասով (Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ):**



Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 5-րդ կայազորային քննչական բաժնում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում ձեռնարկված քննչական եւ այլ վարութային գործողությունների արդյունքում ձեռք են բերվել բավարար փաստեր այն մասին, որ Ե.Դ.-ն 2023 թվականի հունվարի 19-ին՝ ժամը 00:40-ի սահմաններում, հանդիսանալով նստեցման շրջանի պատասխանատու, խախտել է շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութի՝ ավտոբենզինի հետ վարվելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջը, ըստ որի՝ հրդեհային անվտանգության նպատակով արգելվում է վառարանները վառելու համար որպես կպչան ավտոբենզինի եւ այլ տեսակի դյուրավառ հեղուկների օգտագործումը:

Ե.Դ.-ն, Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի 1-ին փողոցի 20-րդ տուն հասցեում տեղակայված՝ ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում շահագործվող վառարանը վառելու նպատակով օրվա հերթապահից ճշտելով այդ ստորաբաժանմանը հատկացված դիզելային վառելիքի եւ ավտոբենզինի գտնվելու վայրը, սեփական նախաձեռնությամբ կացարանի հարակից տարածքում բացազատված ավտոհավաքակայանից վերցրել է տրանսպորտային միջոցների մեկնարկիչները գործի գցելու համար հատկացված ավտոբենզինով լցված 5 լիտր տարողությամբ տասը հատ պլաստմասե տարաներից մեկը, վերադարձել է կացարան եւ վառարանը վառել ավտոբենզինով: Դրա հետեւանքով կացարանում բռնկվել է հրդեհ:

ՀՀ ՊՆ համապատասխան մի շարք պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունքի հետեւանքով (հակահրդեհային պաշտպանության համապատասխան միջոցներով չապահովելու պատճառով) կացարանում գտնվող զինծառայողների կողմից ոչ միայն հնարավոր չի եղել մարել հրդեհը, այլ նաեւ պահուստային ելքի բացակայության պայմաններում կոտրել կացարանի պատուհաններին ամրացված երկաթյա ճաղավանդակները եւ դուրս գալ այնտեղից:

Ե.Դ.-ի կողմից կացարանում հրդեհ բռնկելու եւ պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից հակահրդեհային պաշտպանության միջոցներով անձնակազմին չապահովելու հետեւանքով կացարանում հանգստի մեջ գտնվող, նույն վաշտի թվով 15 պարտադիր ժամկետային զինծառայողներ մահացել են, իսկ սպան եւ 4 պարտադիր ժամկետային զինծառայողներ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«Ժողովուրդ» օրաթերը գրել էր, որ 5 զինվորներին կյանքից զրկելու գործով քննարկվում է սպայի հարցը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում տեղի ունեցած հրդեհի գործով նախաքննական մարմինը քննարկում է սպայի մեղադրանքի եւ խափանման միջոցի հարցը:

ՔՈՒՐԴ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐ

# Ի՞ՆՉ Է ԱՐԵԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

**ArmLur.am-ը գրել էր, որ Ազգային անվտանգության ծառայությունը քրեական գործ է հարուցել, եւ բավականին խիստ է դրվել հարցը. հարկ է պարզել, թե ինչպես են երկու քուրդ ազատամարտիկներ՝ Աթիլլա Չիչեքին եւ Հուսեյին Յըլդըրըմին Թուրքիայում հայտնվել:**

Նշենք, որ Աթիլլա Չիչեքին եւ Հուսեյին Յըլդըրըմին մեղադրվում էին, որ չունենալով զենք եւ ռազմամթերք ձեռք բերելու իրավունք՝ 2021 թվականի օգոստոսի 16-ին անցել են Արաքս գետն ու ապօրինի հատել ՀՀ պահպանվող պետական սահմանը: ՀՀ վերաքննիչ դատարանը 5 տարի ժամկետով ազատազրկման էր դատապարտել նրանց, որը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով:

Քուրդ ազատամարտիկներն ազատ են արձակվել հենց դատական նիստերի դահլիճից, այսինքն՝ նրանք եղել են ազատության մեջ, եւ, ահա, 7 ամիս ազատության մեջ գտնվելուց հետո ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանն էր ահազանգել այն մասին, որ քուրդ ազատամարտիկները, որոնք գտնվել են Հայաստանում եւ պայքարել են թուրքական բռնատիրության դեմ, այսօր Թուրքիայում են:

Ինչպե՞ս են նրանք հայտնվել Թուրքիայում. ահա հենց այս առեղծվածն էլ, հուսանք, կպարզի Ազգային անվտանգության ծառայությունը: Ավելի վաղ նրանց արտահանձնումը հերքել էր նաեւ Արդարադատության նախարարությունը: Փաստորեն, պետական ատյանները անտեղյակ են մեր երկրից Թուրքիա հայտնված քրդերի դեպքից: Ստեղծված իրավիճակի մասին զրուցել ենք Պրոբացիոն ծառայության տնօրեն Գեւորգ Սիմոնյանի հետ. ի՞նչ պետք է աներ ծառայությունը, որ չի արել: Ըստ նրա՝ Պրոբացիոն ծառայության թերացումն այս գործում չկա, եւ քուրդ ազատամարտիկները մինչեւ ծառայության հսկողության տակ լինելն են լքել սահմանը:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՊԱՏՐՈՆ ԴԱՎՈՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Դատարանը բավարարել է բանակին զենք մատակարարած Պատրոն Դավո մականունով հայտնի Դավիթ Գալստյանին 2 ամսով կալանավորելու՝ Ազգային անվտանգության ծառայության միջնորդությունը: Այս մասին հայտնեցին ԲԴԽ-ից:

Դավիթ Գալստյանը պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի հետ միասին մեղադրյալ է «անպիտան հրթիռների» գործով: Նա նույն գործով՝ կալանավորվել, ամիսներ անց էլ 50 միլիոն դրամ գրավի դիմաց ազատ է արձակվել:

Հիշեցնենք, որ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն, գործարար Դավիթ Գալստյանին՝ Պատրոն Դավոյին կալանավորելու ու նրա գործողությունների մասով ԱԱԾ բացահայտումների շղթան, չի բացառվում, հասնի մինչեւ ՊՆ գեներալների: Տեղեկացանք, որ նախաքննական մարմինն այս օրերին ստուգում է ՊՆ պաշտոնյաների ներգրավվածությունը: Գրել էինք, որ Դավիթ Գալստյանը կալանավորվելու է, քանի որ ԱԱԾ-ն բացահայտումներ է արել նրա ՍՊԸ-ի կողմից միլիարդների չարաշահումների մասով:

## ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ՆՌՆԱԿ

ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւանի գնդի պարեկները հունվարի 30-ին՝ ժամը 23:40-ին, Կիլիկիայի եւ Վերֆելի փողոցների խաչմերուկում հայտնաբերել, զինամթերք պահելու կասկածանքով ձերբակալել եւ ոստիկանության Մալաթիայի բաժին են տեղափոխել Կոտայքի մարզի Քասախ գյուղի 38-ամյա մի բնակչի իր վարած «Օպել» մակնիշի մեքենայով: Բաժնում խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է «ՌԳԴ» տիպի նռնակ՝ պայթուցիչով: «Օպելը» տեղափոխվել է բաժնի հատուկ պահպանվող տարածք:

Քասախցի տղամարդը ներկայացվել է նախաքննական մարմին:

## ՍՊԱՌՆԱՑԵԼ ԵՆ ԴԱՆԱԿՈՎ

Հունվարի 31-ին՝ ժամը 23:40-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն է զանգել Արագածոտնի մարզի Աշնակ գյուղի 29-ամյա մի բնակիչ եւ հայտնել, որ Խանջյան փողոցի բարերից մեկում երկու երիտասարդի հետ գումարային հարցի շուրջ խոսակցություն է ունեցել, որի ընթացքում նրանցից մեկը դանակի սպառնալիքով վերցրել է իր բջջային հեռախոսն ու ոսկյա մատանին:

Ոստիկանության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից հայտնում են, որ ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզել են երիտասարդների ինքնությունը:

Մայրաքաղաքի բնակիչ, 20-ամյա եղբայրները փետրվարի 1-ին՝ ժամը 00:05-ին, Խանջյան փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել եւ ներկայացվել են նախաքննական մարմին: Կատարվում է նախաքննություն:

*● Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 31-ից փետրվարի 1-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 63 դեպք, որոնցից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

# ՀՐԱԺԱՐՎԵԼ ԵՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԵԿՆԵԼՈՒՑ

Իջեւան խոշոր համայնքի Այգեհովիտ գյուղի բնակիչ, 1990թ. ծնված Արման Արարատի Պողոսյանին, Իջեւան համայնքի Աչաջուր գյուղի բնակիչ,1996թ. ծնված Արգամ Կամոյի Բալասյանին եւ Աչաջուր գյուղի բնակիչ, 1994թ. ծնված Կարեն Սամվելի Վարդումյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն զորամասի պայմանագրային զինծառայողներ, ՀՀ կառավարության 2020թ. սեպտեմբերի 27-ի թիվ Ն-1586 որոշմամբ հայտարարված ռազմական դրության ժամանակ՝ 2020թ. հոկտեմբերի 25-ին, խմբով հրաժարվել են զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումից՝ Արցախի Հանրապետությունում մարտական գործողություններին մասնակցելուց, որը զուգորդվել է դրանց փաստացի չկատարմամբ, եւ նրանք վերադարձել են իրենց զորամասի մշտական տեղակայման վայր: Նրանցից յուրաքանչյուրին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 3-րդ մասով: Սույն հոդվածով բնութագրվող արարքը պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով: Նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը, նրանց տվյալները ներառվել են ՀՀ սահմանի էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում նրանց հնարավոր ելքը ՀՀ տարածքից արգելափակելու համար: Սույն քրեական գործով դատական վարույթը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանից ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի վարույթ, որտեղից էլ վերադարձվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան, ուր դատական նիստեր են կայանում:

# ՀՖՖ-Ն ՉԻ ՕԳՆՈՒՄ

2022թ. նոյեմբերի 5-ին մեկնարկել է Հայաստանի սիրողական ֆուտբոլի Ա լիգայի 2022-2023 մրցաշրջանը: Առաջնությանը մասնակցում է նաեւ Իջեւան համայնքի Ազատամուտ բնակավայրը ներկայացնող «Բենտոնիտ» թիմը: 2019 թվականին հիմնադրված ֆուտբոլային այդ ակումբի հիմնադիրն է նախկինում Ազատամուտ գյուղի վարչական ղեկավար, ապա՝ «Տավուշ» ՋՕԸ-ի տնօրեն, ներկայումս Հայաստանի մաքսային համակարգում պաշտոնավարող Վահագն Ալավերդյանը: Նա հայտնեց, որ իր ղեկավարած ֆուտբոլային ակումբը մանկապատանեկան 6 թիմ ունի: Վ. Ալավերդյանից տեղեկացա, որ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ֆինանսական աջակցություն չի ցուցաբերում Տավուշի սահմանագոտում ստեղծված այդ թիմերին: Վերջինիս խոսքով՝ այդ թիմերը պահելուն ֆինանսապես աջակցում են իր ընկերները, նաեւ «Էկովիզն» կազմակերպությունն է օգնություն ցուցաբերել:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ԿՍՏԵՂԾՎԻ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԿԱՄՊՈՒՍ

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի եւ Ռոնի մասնագիտական կրթության ընկերության (SEPR) միջեւ կնքվել է համագործակցության հուշագիր հետագա ծրագրերի առաջխաղացման եւ զարգացման նպատակով:**



Հուշագրի ստորագրման արարողությանը մասնակցել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսյա Սվաջյանը, «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Գոհար Գրիգորյանը եւ հիմնադրամի գործընկեր, Ռոնի մասնագիտական կրթության ընկերության նախագահ Քրիստիան Դրոզը:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անն Լույոն, դեսպանության ներկայացուցիչներ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսյա Սվաջյանը կարեւորել է մասնագիտական կրթության ոլորտում Ֆրանս-հայկական համագործակցության ամրապնդմանն ուղղված հուշագրի կնքումը՝ վստահություն հայտնելով, որ այն կնպաստի ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետությանը:

«Արդեն հաստատվել է ՀՀ կրթության զարգացման՝ մինչեւ 2030 թվականի ռազմավարական ծրագիրը, որտեղ առանձին եւ շատ կարեւոր մասնաբաժին ունեն հենց մասնագիտական կրթության զարգացմանն ուղղված գործողությունները: Այս համատեքստում նախատեսում ենք ունենալ ռեսուրս կենտրոններ, հանրապետական նշանակության քոլեջներ եւ այս գործընթացի շրջանակում կարեւորում ենք Ֆրանս-հայկական քոլեջի կարողությունների զարգացումն ու նոր հնարավորությունների ընձեռումը»,- նշել է նախարարի տեղակալը:

Շնորհավորելով հուշագրի կնքման կապակցությամբ՝ նա կարեւորել է մարզային կառույցների ակտիվացմանն ուղղված գործընթացը: Նախարարի տեղակալը վստահություն է հայտնել, որ Հայաստանի մարզային ուսումնական հաստատությունների կապն ինչպես Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի, այնպես էլ Ֆրանսիայում գործող ուսումնական կենտրոնների հետ նոր մասնագիտություններ ներդնելու եւ առկա մասնագիտությունները զարգացնելու հնարավորություն կընձեռի:

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի զարգացման նպատակով նախատեսվում է Երեւանում ստեղծել Արհեստների կամպուս, որտեղ կիրականացվեն փորձարարական նոր կրթական ծրագրեր՝ զարգացնելով հատկապես աշխատանքի վրա հիմնված կրթությունը եւ մեծահասակների կրթությունը: Նախատեսվում է, որ այն կդառնա մասնագիտական կրթության ռեսուրս կենտրոն: Արհեստների կամպուսի ստեղծման ծրագիրն արդեն հաստատվել է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում:

Ռոնի մասնագիտական կրթության ընկերության նախագահ Քրիստիան Դրոզն ընդգծել է՝ այս հուշագրի կնքումը հետագայում կոնկրետ քայլեր իրականացնելու հնարավորություն է ստեղծում:

«Նախորդ մեկ շաբաթվա ընթացքում մեծ առաքելություն ենք կատարել Հայաստանի մարզերում. անցել ենք 1600 կմ-ից ավելի ճանապարհ, այցելել ենք 15 նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, եղել ենք Հայաստանի 2 մարզպետարաններում եւ 5 քաղաքապետարաններում: Այս հուշագրով այնպիսի նպատակներ են սահմանված, որոնք մենք միասին պետք է իրագործենք»,- ասել է Քրիստիան Դրոզը՝ հուշագրի կնքումը կարեւորելով նաեւ Երեւանի եւ Լիոնի միջեւ համագործակցության ամրապնդման համատեքստում:

Հիմնադրամի զարգացման ծրագրով նախատեսվում է աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմանը, կանանց դերի բարձրացմանը տնտեսության մեջ, ինչպես նաեւ ներառել սոցիալական կյանքի բաղադրիչ համայնքի համար:

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Գոհար Գրիգորյանը նշել է, որ ստեղծվելիք կամպուսի գործունեության կարեւոր ուղղությունը Հայաստանի մարզերում լավագույն փորձի տարածումն է լինելու՝ պետական եւ մասնավոր մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցությամբ: Կողմերն արդեն իսկ համագործակցության հեռանկարներ են նախանշել Ալավերդու ուսումնարանի եւ Վայոց ձորի տարածաշրջանային քոլեջի հետ՝ տարբեր մասնագիտությունների գծով փոխանակման ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի եւ Ռոնի մասնագիտական կրթության ընկերության ներկայացուցիչներն այցելել են նաեւ ոչ ֆորմալ կրթություն իրականացնող հաստատություններ, մասնավորապես՝ Դեբետի «ՔՈԱՖ» կենտրոն, Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, որտեղ արհեստների զարգացման հեռանկարներ կան: Գոհար Գրիգորյանի խոսքով՝ համագործակցության ավելի լայն շրջանակ են նախատեսվում ԵՄ Erasmus+ փոխանակման ծրագրի շրջանակում:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անն Լույոն եւս իր լիակատար աջակցությունն է հայտնել նախաձեռնությանը՝նշելով, որ այն համահունչ է ֆրանկոֆոնիայի տարածմանը. «Ծրագրի իրականացումը կարեւորություն ունի ինչպես ֆրանս-հայկական կրթամշակութային, այնպես էլ քաղաքացիական հասարակությունների համագործակցության շրջանակում: Սա մեծ թվով երիտասարդների թույլ կտա ավելի մոտենալ Ֆրանսիային, կնպաստի նաեւ ֆրանսերենի կիրառմանը եւ առավել տարածմանը»:

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ

# ԱՆԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

**Փետրվարի 1-ից ընտանեկան/սոցիալական նպաստների վճարման, անձի ֆունկցիոնալության գնահատման եւ Հայփոստից կենսաթոշակի անկանխիկ վճարման գործընթացներում փոփոխություններ են իրականացվում:**

1. Առաջին անգամ հաշմանդամության սահմանման համար դիմող քաղաքացիները կանցնեն անձի ֆունկցիոնալության գնահատում:

2. ՀՀ բոլոր քաղաքներում, 1000 եւ ավելի բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում փետրվարի 1-ից հետո նշանակվող (ինչպես նաեւ փաստաթղթերի հետ կապված ցանկացած փոփոխություն Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն ներկայացնելու դեպքում) ընտանեկան, սոցիալական նպաստներն ու հրատապ օգնությունները կվճարվեն անկանխիկ եղանակով:

3. Ազգային օպերատորը՝ Հայփոստը, այլեւս անկանխիկ եղանակով վճարումներ չի կատարի. Հայփոստը կշարունակի իրականացնել միայն կանխիկ եղանակով վճարումներ:

Միասնական սոցիալական ծառայությունից տեղեկացնում են, որ, համաձայն ՀՀ կառավարության 23.04.2014թ. թիվ 460-Ն որոշման հավելված 1-ի, 15-րդ կետի դրույթների, նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչեւ 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ցուցակում ավանդատուի հաշվառման հերթական համարը որոշվում է դիմումի օրվա դրությամբ՝ըստ նույն որոշմամբ հաստատված առաջնահերթությունների:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ԼՈՒՐԵՐ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՕՐԵՆՔՈՒՄ

««Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենսդրական փաթեթի քննարկումն երեկ խորհրդարանում հետաձգվեց եւս երկու ամսով: Նկատենք, որ այս օրենքը ընդունվել է երկու տարի առաջ, եւ հիմնավորման մեջ նաեւ նշվում է, որ այդ օրենքի կիրարկման արդյունքում ի հայտ են եկել բացթողումներ եւ խնդիրներ, որոնք հստակեցման կարիք ունեն: ArmLur.am-ը տեղեկացավ, որ երեկ հարցը քննարկվել է ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում: ՀՀ առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանը նիստի ընթացքում նշել է, որ նախաձեռնության նպատակն արտադրական կանեփի արտադրության, ներմուծման, արտահանման եւ մեծածախ առեւտրի լիցենզավորման նպատակով դիմած անձանց համար առավել բարենպաստ պայմանների ստեղծումն ու ավելորդ փաստաթղթեր պահանջելուց խուսափելն է: Եվ, ահա, գործող օրենքով՝ արտադրական կանեփի արտադրության, ներմուծման, արտահանման, մեծածախ առեւտրի գործունեության իրականացման համար ներկայացվող փաստաթղթերի ցանկում առկա է բիզնես ծրագիր ներկայացնելու պահանջ, որի վերաբերյալ որեւէ օբյեկտիվ գնահատական տալ հնարավոր չէ: Նախաձեռնությամբ առաջարկվում է հանել քվոտաների խախտման դեպքում լիցենզիայի դադարեցման հիմքը: Լիցենզավորված անձին հնարավորություն է տրվում վերանայել քվոտաները: Որոշակի քննարկում ծավալելուց հետո պատգամավորները, հաշվի առնելով հարցի կարեւորությունն ու տնտեսվարողների կարծիքներին ծանոթանալու, ինչպես նաեւ նախաձեռնության լրամշակման անհրաժեշտությունը, առաջարկել են հետաձգել հարցի քննարկումը, ինչը զեկուցողն ընդունել է:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

# 5 ՀԱՐՑ՝ ՄԵԿ ԺԱՄՈՒՄ

Տավուշի մարզպետարանում փետրվարի 1-ին՝ ժամը 17:00-ին, նշանակված էր Տավուշի մարզխորհրդի նիստ: Օրակարգում 2022 թվականին իրականացված եւ 2023 թվականի համար հաստատված սուբվենցիոն ծրագրերի, Տավուշի մարզի համայնքների 2022 թվականի սեփական եկամուտների կատարողականների ամփոփման եւ 2023 թվականի տեղական բյուջեների հաստատման գործընթացի, Տավուշի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, 2022 թվականի ձմեռային զորակոչի արդյունքների եւ 2023 թվականի գարնանային զորահավաքի նախապատրաստական աշխատանքների մասին հարցերն են: Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի վերաբերյալ նախատեսված են մարզպետարանի աշխատակազմի վարչությունների ղեկավարների եւ բաժնի վարիչների զեկույցները: Օրակարգի հարցերը զեկուցելու, քննարկելու վերաբերյալ տրվել է ընդամենը մեկ ժամ, քանզի ժամը 18:00-ին աշխատանքային օրն ավարտվում է: Տավուշի մարզխորհրդի նիստերը ժամը 17:00-ին անցկացնելու նորամուծությունը մտցրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը:

*ՌՈՒԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ.

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Հալիձոր թաղամաս, 5 շենք, 1 հասցեում գտնվող 56 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝6800000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Քաջարան, Քաջարան ք., Շիրվանզադեի փողոց, 6 շենք, 38 հասցեում գտնվող 53,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝8660000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Խաղաղ Դոնի փողոց, 5 շենք, 354 հասցեում գտնվող 72.2 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝26330000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Նոր-Նորքի 9-րդ միկրոշրջան, 6 շենք, 103 հասցեում գտնվող 91,48 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝28730000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Վիլնյուսի փողոց, 71 շենք, 12/1 հասցեում գտնվող 45.4 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝16880000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Վիլնյուսի փողոց, 57 շենք, 97 հասցեում գտնվող 75,79 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24830000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Դիլիջան, քաղաք Դիլիջան, Կամոյի փողոց, 207/2 հասցեում գտնվող 145,7 ք.մ. բնակելի տուն եւ 0,05395 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝15980000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Հեղափոխության հրապարակ, 4բ շենք, 22 հասցեում գտնվող 68,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16930000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Շիրակացու փողոց, 13/15 հասցեում գտնվող 126.34 ք.մ. բնակելի տուն եւ 0.0155 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝15840000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Շերամ-2 թաղամաս, 1-4ա շենք, 2 հասցեում գտնվող 141,21 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝19860000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Գ. Նժդեհի փողոց, 30/1 շենք, 10 հասցեում գտնվող 49,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Ա. Չեխովի փողոց, 1-ին նրբանցք, 16 հասցեում գտնվող 190,5 ք.մ. բնակելի տուն եւ 0,04601 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 51800000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Լենինականի փողոց, 4 շենք, 1 հասցեում գտնվող 140,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 39500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Գ. Միքայելյան փողոց, 3 շենք, 16 հասցեում գտնվող 104,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝31500000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արարատ ք., Կոմիտասի փողոց, 2 շենք, 36 հասցեում գտնվող 65,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝9780000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 2-րդ փողոց, 42 հասցեում գտնվող 101,14 ք.մ. բնակելի տուն, 17,3 ք.մ. օժանդակ շինություն, 1 ք.մ. /1,9 խ.մ., 4,82 գծամետր/ պարիսպ եւ 0,01575 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝27700000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան ք., Ա. Հարությունյան փողոց, 46 հասցեում գտնվող 99.39 ք.մ. բնակելի տուն, 34.47 ք.մ. անասնաշենք, 2.85 ք.մ. կաթսայատուն եւ 0.08 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝10200000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ ք., Խարազյան փողոց, 20 հասցեում գտնվող 68,99 ք.մ. բնակելի տուն, 20,44 ք.մ. տնտեսական շինություն, 9,8 ք.մ. թոնրատուն, 13,22 ք.մ. ծածկ եւ 0.0447 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14500000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ ք., Իսակովի փողոց, 72ա շենք, 20 հասցեում գտնվող 59,4 ք.մ. բնակարան եւ 25,4 ք.մ. ինքնակամ կառուցված շինություններ: Լոտի մեկնարկային գինը՝14350000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ ք., Մարքսի փողոց, 16 շենք, 29 հասցեում գտնվող 75,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝15520000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Արցախյան խճուղի, 10 շենք, 5 հասցեում գտնվող 83,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝16450000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Թալին ք., Շահումյան փողոց, 9 շենք, 14 հասցեում գտնվող 77.7 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, 43-րդ փողոց, 42/2 շենք, 25 հասցեում գտնվող 120,0 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝71900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Լեփսիուսի փողոց, 6 շենք, 16 հասցեում գտնվող 73,9 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝34330000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի ք., Զ. Անդրանիկի փողոց, 7, 37 հասցեում գտնվող 76,1 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մոլդովական փողոց, 60 շենք, 52 հասցեում գտնվող 75,32 ք.մ. մակերեսով բնակարան եւ 3,72 ք.մ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝25570000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մ. Գալշոյան փողոց, 36 շենք, 116 հասցեում գտնվող 79,2 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝24500000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Գեղանիստ, 3-րդ փողոց, 35/1 հասցեում գտնվող 157,9 ք.մ. մակերեսով բնակելի տուն եւ 0,017 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 23170000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Նալբանդյան փողոց, 24 շենք, 14 հասցեում գտնվող 49,71 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝6700000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Նալբանդյան փողոց, 29 շենք, 8 հասցեում գտնվող 80,04 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12300000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք., Խ. Ստեփանյան փողոց, 13 շենք, 21 հասցեում գտնվող 73,8 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝5400000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Ա. Եղյան փողոց, 32 հասցեում գտնվող 232.4 ք.մ. բնակելի տուն, 4.6 ք.մ. սանհանգույց եւ 0.0709 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝19380000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ ք., Ս. Զորավարի փողոց, 57 հասցեում գտնվող 226.25 ք.մ. բնակելի տուն, 2.95 ք.մ. ծածկ, 8.7 ք.մ. /15.6 խ.մ./ պարիսպ եւ 0.085 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 19600000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Երեւանյան խճուղի, 125 շենք, 24 հասցեում գտնվող 48,32 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝6700000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., միկրոշրջան թաղամաս, 227 շենք, 3 հասցեում գտնվող 73,65 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝10700000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., միկրոշրջան թաղամաս, 114 շենք, 29 հասցեում գտնվող 72,98 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Ա. Պոպովի փողոց, 76 հասցեում գտնվող 266,2 ք.մ. բնակելի տուն, 21,5 ք.մ. ավտոտնակ, 3,7 ք.մ. հավանոց, 6,4 ք.մ. պահեստ, 0,9 ք.մ. /0,72 խ.մ., 4,5 գծամետր/ պարիսպ եւ 0,039 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 38200000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 20.02.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 16.03.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

## Team Telecom Armenia

Գ.

# ՏԱՐԲԵՐՎԻ՛Ր ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳՈՎ

**Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը եւ Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը հայտարարեցին միջազգային չափանիշներին համապատասխան հեռախոսազանգի (ringtone) հայկական մեղեդիների ձայնագրությունների թողարկման մասին:**

Հայկական զանգերի ձայնագրությունն իրականացրել է ամերիկյան հեղինակավոր Parma Recordings ընկերությունը, եւ թողարկվել է Armsymphony Records պիտակի ներքո: Պրոֆեսիոնալ ձայնագրությունը կատարել է «Գրեմմի» մրցանակի առաջադրված հնչյունային ինժեներ Յան Կոշուլիչը:

Ինչպես ասուլիսի ընթացքում նշեց դիրիժոր Սերգեյ Սմբատյանը, ձայնագրման համար ընտրվել են հատվածներ հայ կոմպոզիտորների ամենահայտնի ստեղծագործություններից, որոնք ճանաչելի են հանրության լայն շրջանակին: Նախագծի նպատակն է նշանավոր ստեղծագործությունների հատվածների միջոցով հայ դասական երաժշտության հանրահռչակումը միջազգային մասշտաբով:

Ձայնագրվել են Կոմիտասի «Կաքավիկ»-ը, հատվածներ Արամ Խաչատրյանի «Գայանե» եւ «Սպարտակ» բալետներից, «Դիմակահանդես» դրամայի երաժշտությունից, Առնո Բաբաջանյանի «Նոկտյուրն»-ը, հատվածներ Ալեքսանդր Հարությունյանի Շեփորի կոնցերտից, Էդուարդ Բաղդասարյանի «Նոկտյուրն»-ից, Ղազարոս Սարյանի Սիմֆոնիկ պատկերներից, Ավետ Տերտերյանի Թիվ 3 սիմֆոնիայից, Ստեփան Շաքարյանի «Ծիծեռնակ»-ից, Տիգրան Մանսուրյանի մեղեդիները կինոֆիլմերից:

Մաեստրո Սմբատյանի տեղեկացմամբ՝ նախաձեռնության զարգացման քարտեզն այժմ քննարկում են գործընկերների հետ, եւ շատ ուրախ է, որ իրենց ծրագրերը կյանքի կոչելու հարցում, ի դեմս Team Telecom Armenia-ի, ունեն գաղափարակիցներ, որոնց աջակցությամբ կատարվում են հայկական կոմպոզիտորական արվեստի հանրահռչակմանն ուղղված նախագծեր:

Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանն ընդգծեց, որ իրենց կազմակերպության համար շատ կարեւոր է սոցիալական պատասխանատվություն կրել ինչպես կրթության, գիտության, այնպես էլ մշակույթի ոլորտներում: Ըստ պարոն Եսայանի՝ այս նախագծում հետաքրքիր կերպով խաչվում են բարձր տեխնոլոգիաներն ու արվեստը, եւ տեխնոլոգիաների միջոցով հեշտությամբ կարելի է հայկական բովանդակությունը ներկայացնել աշխարհին: Team Telecom Armenia-ի պատասխանատուներն ընդգծում են, որ պատրաստ են օգտագործել ամբողջ ռեսուրսները, որպեսզի հայկական բովանդակությունը հասանելի դառնա թվային հարթակներում եւ ընդհանուր ճանաչում ստանա համաշխարհային շուկայում:

Ասուլիսի բանախոսները նշեցին, որ քննարկում են նախագիծը շարունակելու եւ հայկական զանգերի շարքն ավելի հարստացնելու հարցը:

Նշենք, որ ձայնագրված մեղեդիները կարող են օգտագործվել նաեւ սոցիալական ցանցերում՝ որպես տեսանյութերի ֆոնային երաժշտություն: Զանգերն առայժմ հասանելի են iTunes-ում, իսկ շուտով՝ նաեւ մյուս երաժշտական հավելվածներում: Ներբեռնելու համար անհրաժեշտ է iTunes-ում փնտրել Armenian Ringtones:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՓԱՌԱՏՈՆ

# Ի՞ՆՉ ԾՐԱԳՐԵՐ ՈՒՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ

**Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի համար 2022 թվականը բավականին բուռն էր թե՛ ստեղծագործական, թե՛ մրցանակների, թե՛ փառատոններին մասնակցելու առումով: Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի տնօրեն Մարիաննա Մխիթարյանը նշեց, որ նախորդ տարի թատրոնն ունեցել է 7 առաջնախաղ: 2022 թվականին թատրոնն արժանացել էր նաեւ «Արտասահմանում լավագույն ռուսական թատրոն» տիտղոսին:**




«Այս մրցանակը տրվում է շատ հազվադեպ, դա մեծ պատիվ է, մեծ երջանկություն է թատրոնի համար: Միգուցե դա է, որ մենք շատ ոգեւորվեցինք ու նոր ծրագրերով ու գաղափարներով ենք առաջ շարժվում: Այս տարին եւս հագեցած է լինելու պրեմիերաներով: Միայն այս գարնանը հանդիսատեսին ենք ներկայացնելու 6 նոր ներկայացում»,-ասաց Մարիաննա Մխիթարյանը:

Թատրոնի տնօրենի բնորոշմամբ՝ գարնան սկիզբն իրենց համար աննախադեպ է լինելու: Մարտի 24-ին, 25-ին, 26-ին բեմ կբարձրանա «Բալզամինովի հարսանիքը» ներկայացումը: Այն բեմադրվում է Աստրովսկու պիեսի հիման վրա: Այս տարի լրանում է Աստրովսկու 200-ամյակը, եւ թատրոնի համար թիրախային է նրա գործերից մեկը բեմադրելը: «Բալզամինովի հարսանիքը» ներկայացման բեմադրիչը Կարեն Ներսիսյանն է:

Ապրիլի 2-ին հանդիսատեսի դատին կհանձնվի նոր կատակերգություն. «Երկնագույն կակաչների փունջը» ներկայացման բեմադրիչը Իրինա Հարությունյանն է: Մարիաննա Մխիթարյանը տեղեկացրեց, որ հանդիսատեսի համար անակնկալ է սպասվում:

Ապրիլի վերջ սպասվում է եւս մեկ առաջնախաղ: Պիեսի բեմադրությունը սկսել էր երջանկահիշատակ Վահե Շահվերդյանը. ավա՜ղ, նա չկարողացավ ավարտին հասցնել աշխատանքը: Աշխատանքներն այժմ ավարտում է Սուրեն Շահվերդյանը: Մարիաննա Մխիթարյանը վստահեցնում է, որ բավականին հետաքրքիր ներկայացում է սպասվում:

Մայիսի սկզբին թատրոնը կուրախացնի փոքրիկներին. սպասվում է «Մկների ժողովը» մանկական ներկայացման պրեմիերան, որի բեմադրիչը Նունե Կիրակոսյանն է:

Մայիսի վերջին եւս մեկ ներկայացում է սպասվում: Հանդիսատեսին կներկայացվի «Ջառանցանք երկուսով» ներկայացումը: Այն բեմադրում է Ելենա Վարդանյանը:

Մարիաննա Մխիթարյանը տեղեկացրեց, որ տարվա ընթացքում սպասվում է նաեւ միջազգային փառատոններին ակտիվ մասնակցություն: Աշխատանքներ են նախատեսված նաեւ թատրոնի վերազինման ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

## ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՆ ԸՆԴՀԱՏՎԵԼ Է

ArmLur.am-ը տեղեկություններ ստացավ այն մասին, որ Կամերային թատրոնի դերասանների հետ կապն ընդհատվել է. պատճառը Իրանում տեղի ունեցած իրադարձություններն են: Դերասաններն այս օրերին գտնվում են Իրանի Իսլամական Հանրապետությունում «Ֆաջր» 4-րդ միջազգային փառատոնի շրջանակներում:

ArmLur.am-ը ստացված տեղեկությունը ճշտելու համար կապ հաստատեց ռեժիսոր Արշալույս Հարությունյանի հետ, որը մեզ հետ զրույցում վստահեցրեց, որ դերասանների հետ ամեն ինչ նորմալ է:

«Նրանց հետ կապը չի ընդհատվել, հիմա վերադառնում են, ճանապարհին են, մոտ երկու ժամից կլինեն Հայաստանի սահմանին: Երկու ներկայացում են խաղացել եւ վերադարձել»,- նշեց մեր զրուցակիցը:

Ավելին՝ ArmLur.am-ը նկատեց նաեւ, որ վերջին օրերին, հենց այդ խնդրով պայմանավորված, դերասանները պասիվ են սոցցանցի իրենց էջերում:

*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊՐԵՄԻԵՐԱ

Ռոտերդամի միջազգային 52-րդ կինոփառատոնի «Մեծ էկրան» մրցութային ծրագրում ընդգրկված ռեժիսոր Ջեսիկա Վուդվորթի (Կաննի, Վենետիկի, Սանդանսի ու Տորոնտոյի կինոփառատոնների մասնակից եւ մրցանակակիր) «Լուկա» լիամետրաժ խաղարկային ֆիլմի համաշխարհային պրեմիերան տեղի է ունեցել հունվարի 29-ին Cinema Pathé 5-ում: ՀՀ ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ հունվարի 30-ին «Լուկա»-ն ցուցադրվել է նաեւ Օստենդի (Բելգիա) միջազգային կինոփառատոնում: Պետական աջակցություն ստացած խաղարկային կինոնկարը՝ «Լուկա»-ն, Բելգիայի, Իտալիայի, Նիդերլանդների, Բուլղարիայի եւ Հայաստանի համատեղ արտադրություն է: Հայկական կողմից ֆիլմի համաարտադրողն է (համապրոդյուսեր) Անժելա Ֆրանգյանը:

Կինոնկարի երկու գլխավոր դերակատարներից մեկը դերասան Սամվել Թադեւոսյանն է: Նրա խաղընկերներն են հոլիվուդյան հայտնի դերասանուհի Ջերալդին Չապլինը եւ բազմաթիվ մրցանակների արժանացած դերասան Յոնաս Սմուլդերսը: «Լուկա»-ն Դինո Բուզատիի «Թաթարական անապատ» հայտնի վեպի ադապտացիան է:

«Լուկա» լիամետրաժ խաղարկային ֆիլմի համաշխարհային պրեմիերայի առիթով Ռոտերդամ եւ Օստենդ են մեկնել Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն Շուշանիկ Միրզախանյանը, ֆիլմ-հանձնակատար Մելիք Կարապետյանը եւ հայկական կողմից՝ պրոդյուսեր Անջելա Ֆրանգյանը:

Ցուցադրությանը ներկա էին գլխավոր դերակատար Ջերալդին Չապլինը, ռեժիսոր Ջեսիկա Վուդվորթը, գլխավոր պրոդյուսեր Փիթեր Բրոսենսը:

ԹԱՏՐՈՆ

## ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՌԵԺԻՍՈՐ

Երեւանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Խանդիկյանի առաջարկով՝ հունվարի 31-ին գեղարվեստական խորհուրդը քննարկել է ՀՀ վաստակավոր արտիստ, բեմադրիչ Գրիգոր Խաչատրյանին թատրոնի գլխավոր ռեժիսոր նշանակելու հարցը: Խորհուրդը միաձայն դրական կարծիք է տվել:

Գրիգոր Խաչատրյանը 1992 թվականին ավարտել է Անդրեյ Սախարովի անվան 69 միջնակարգ դպրոցը: Այնուհետեւ ավարտել է թիվ 14 գեղարվեստի պետական ուսումնարանը՝ ստանալով հախճապակու վրա նկարիչ-կատարողի որակավորում: 1994-1996 թվականներին ծառայել է հայոց բանակում: 2003 թվականին ավարտել է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտը՝ դրամատիկ թատրոնի ռեժիսոր (Արմեն Խանդիկյանի արվեստանոց):

1998 թվականից մինչ օրս աշխատում է Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում որպես դերասան, իսկ 2004 թվականից՝ նաեւ որպես ռեժիսոր: ԵԹԿՊԻ դրամատիկ թատրոնի դերասանի բաժնում, որպես ասիստենտ, բեմադրել է Մ. Մակդոնախ՝ «Բարձ-մարդը», Էսքիլես՝ «Քոեփորներ», Ու. Շեքսպիր՝ «Տասներկուերորդ գիշեր», Է. Վոլոդարսկի՝ «Սրիկա» ներկայացումները: Բեմադրել է նաեւ Ու.Շեքսպիր՝ «Օթելլո», Ռ. Բելեցկի՝ «Թույն», Էվրիպիդես՝ «Բաքոսուհիներ» ներկայացումները:

Կազմակերպել եւ բեմադրել է մի շարք միջոցառումներ՝ Վարդգես Պետրոսյան - 80, Երվանդ Երզնկյան-70, Էվելինա Շահիրյան - 75, Ավետ Տերտերյան, ՊՆ Գորիս - 2020, Հունիսի 1 /Երեխաների պաշտպանության միջազգային օր/ - 2019, ARTSAKH WINE FEST - 2018, 2019, ԱԻՆ - 22, 23, 24-ամյակներ, Ջարուհի Բաբայան՝ «Զինվորի կողքին»-2013, FPWC - 2013, 2014, 2016, «Թատրոն X» - 2011, Կիմ Արզումանյան-80, Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակ /2010, 2012, 2018/, Դանիել Վարուժան - 125, «Արտավազդ» ամենամյա թատերական մրցանակաբաշխություն /2010, 2017, 2018/, «Ջարթոնք» երաժիշտ-կատարողների մրցույթ-փառատոն, /2009/, ՆԳՆ 8,9 - ամյակ, /2009, 2010/, «PERNOD - RIKARD» /2008/, «JUDO» Առաջնության բացում /2007/, «Սեր եւ շուշաններ» Շուշան Պետրոսյանի մենահամերգ /2004/: Նկարահանել է «Սահմանապահ գյուղեր» վավերագրական 16-մասանի ֆիլմաշարը:

● *Փետրվարի 4-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Կուկարաչա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ինձնից պահանջում են աշխատել ավելի, սակայն հրաժարվում են վճարել դրա դիմաց. ի՞նչ անել:**

*Հայկ Մարգարյան (21 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Գործատուի կողմից Ձեզ արտաժամյա աշխատելու պահանջ ներկայացվելու դեպքում, նախ, պետք է նրանից պարզել, թե ինչու է ցանկանում, որ Դուք արտաժամյա աշխատեք, եւ քանի ժամ է պահանջում: Եթե արտաժամյա աշխատելու պատճառները հիմնավոր չեն եւ չեն բխում աշխատանքային օրենսդրությունից, ապա Դուք կարող եք հրաժարվել արտաժամյա աշխատանքից, իսկ եթե համա-ձայնել եք, ապա պետք է գործատուին հայտնեք, որ դրա համար Ձեզ հավելում պետք է վճարի: Նպատակահարմար է, որ Դուք յուրաքանչյուր անգամ ուշադիր հաշվեք, թե կոնկրետ որ օրը որքան եք արտաժամյա աշխատել, եւ պահանջեք գործատուից, որ արտաժամյա աշխատանքի կատարումը գրանցվի հաշվապահությունում: Եթե գործատուն չի վճարել կամ հրաժարվում է վճարել արտաժամյա աշխատանքի համար վարձատրությունը, ապա անհրաժեշտ է փոստային ծառայության միջոցով (պատվիրված եւ հետադարձ ծանուցմամբ) դիմում-պահանջ ուղարկել նրան՝ պահանջելով վճարել վարձատրությունը, իսկ չվճարելու դեպքում՝ դիմել դատարան՝ ընդդեմ գործատուի:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Արտաժամյա աշխատանքի ներգրավելու անհրաժեշտության դեպքերում գործատուն պետք է նախօրոք այդ մասին տեղեկացնի աշխատողին: Արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսից ոչ պակաս չափով, իսկ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար՝ ոչ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով: Աշխատողին ավել աշխատած ժամերի համար հավելումները պետք է հաշվարկվեն եւ վճարվեն հիմնական աշխատավարձի հետ միասին յուրաքանչյուր ամսվա համար մինչեւ հաջորդ ամսվա 15-ը:

*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ԻՐԱՎՈՒՆՔ

**ՀԱՐՑ. Հարեւանս իր պատշգամբում տեսախցիկ է տեղադրել ու նկարահանում է իմ տան մուտքը: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:**

*Կարինե Նազարեթյան (57 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ձեր մասնավոր տարածքը ներառող տեսանկարահանումը, օրինակ՝ Ձեր տան մուտքը կամ պատուհանը, կարող է իրականացվել միայն Ձեր համաձայնությամբ: Ի՞նչ անել այն դեպքում, երբ Դուք Ձեր մասնավոր տարածքը ներառող վիդեոտեսանկարահանման համար համաձայնություն չեք ներկայացրել:

-Անհրաժեշտ է դիմել հարեւանին կամ վիդեոտեսանկարահանումը տնօրինող անձին եւ պահանջել, որ վիդեոտեսանկարահանումն իրականացվի այնպես, որ դա չներառի Ձեր մասնավոր տարածքը:

-Եթե Ձեր պահանջը չի իրականացվում, եւ Ձեր մասնավոր տարածքը ներառող վիդեոտեսանկարահանումը չի վերացվում, ապա անհարժեշտ է դիմել ՀՀ արդարադատության նախարարության «Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն»՝ խնդրելով հարուցել վարչական վարույթ, եւ պարտավորեցնել Ձեր հարեւանին վերացնելու Ձեր մասնավոր տարածքը ներառող վիդեոտեսանկարահանումը:

Այդ նպատակով անհրաժեշտ է, նախ, մի քանի անկյուններից նկարել տեղադրված տեսախցիկի դիրքը, նկարել այնպես, որ նկարի մեջ երեւա, որ տեսախցիկի տեսադաշտում է գտնվում նաեւ Ձեր տունը, տան մուտքն ու ելքը կամ պատուհանը, որից հետո անհրաժեշտ է այդ լուսանկարները կցել դիմում-բողոքին:

*ՀՀ արդարադատության նախարարության
անձնական տվյալների
պաշտպանության գործակալություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Վիդեո եւ տեսանկարահանող սարքավորումների օգտագործումը եւ այդ տարբերակով անձի վերաբերյալ տեղեկության հավաքումն առնչվում է անձի անձնական, ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին: Այս իրավունքը պաշտպանված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրությամբ:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է
Երեւան-Սեւան ավտոճանապարհին*



Կոտայքի մարզում փետրվարի 1-ին ճանապարհի մերկասառույցի պատճառով ավտոթար է տեղի ունեցել. Երեւան-Սեւան ավտոճանապարհին՝ Չայնիի ոլորաններում, ճանապարհը սպասարկող ճանշինի անգործության եւ փնթի աշխատանքի հետեւանքով բախվել են Lexus RX եւ Opel մակնիշի ավտոմեքենաները: Վթարի հետեւանքով տուժածներ չկան: Lexus-ի մեջ եղել են «Արար» հիմնադրամի համահիմնադիր, քաղաքական ու հանրային գործիչ, ճանաչված Ավետիք Չալաբյանը եւ «Արար» հիմնադրամի տնօրեն, սիրված ու ճանաչված հասարակական գործիչ Արմեն Խաչիկյանը:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

### ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.02.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: